Ե

ԵԱՂՈՒՊ ԱՄԻՐԱ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, ԱԿՆՑԻ.— Վաճառապետ (պազիրկեանպաշը) արքունի. 1751 ին, Նալեան Յակոբ պարք.ի օրով, իր Սողոմէ կնոջ հետ ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. իր ընծայաբերութիւնները պղնձէ յիշատակարանի մը վրայ միասին նշանակուած են. (ԺՊԵ. հատ. Բ. էջ 78-79). Եաղուպ ամիրա՝ հայկական անունով Յակոբ Յովհաննէսեան, իր ուխտը կատարելէ և Ս. Յարութեան տաճարին վերնատունը նորոգել տալէ յետոյ, Նալեան պարք.ի հետ կը վերադառնայ Պոլիս 1752ին, և նոյն տարին Յուլիս 9ին կը գլխատուի Սուլթան Մահմուտէն (Ազգայմ. էջ 2979)։

Եաղուպ ամիրա Ս. Յակոբի տաճարին Ս. Մակարի մատրան մէջ ունի հետևեալ յիշատակարանը.

«Եաղուպ ազայ փրկչին ծառայ.
Շինեաց զտապան սբ. Մակարայ.
Լուսաւորչին և մատն է սատ.
Բարեխօսել նմին պատրաստ։

Յամի Տեառն 1751 և Հայոց թուին ՌԲՃ.ի պատրիարքութեան Յակոբայ»։

Քրիստոսի Ս. Գերեզմանին ոսկիէ կանթեղ մը յիշատակ դրած է և այս է յիշատակարանը.

«Յիշատակ է Ակնցի Յովհաննէսի որդի գերօրհնեալ մհտ. Եաղուպ Աղային Ս. Գերեզմանին Քրիստոսի մշտավառ կանթեղս»։

ԵԶԵԿԻԷԼ ՎՐԴ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, ԶՄԻՒՌՆԻԱՑԻ.—Մբ. Ծ. 1834ին, Զա. 1868ին, ՏՅՊ. (1870-71), Տեսուչ Տպարանի (1872-76). աչքերու դարմանումի համար կ'ուղևորի Վիեննա (1876-96). յետոյ կարգաթող 1896ին։

ԵԶԵԿԻԷԼ ՎՐԴ. ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՎԱՆՑԻ.—Մբ. Ծ. 1864ին, Զա. 1892ին. հիւրընկալ (1894-95). Ա.ա. Տիզրանակերտի (1895-